ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

ք. Գավառ ***20.12.2018 թ. ժամը 11.00***

Նախագահում էր Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետ Գնել Սանոսյանը, մասնակցում էին Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի խորհրդի 57 անդամներից 52-ը:

Մասնակցում էին Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի տեղակալներ Նարեկ Գրիգորյանը, Անուշավան Ղազարյանը, Արամ Թարվերդյանը, մարզպետարանի գլխավոր քարտուղար Սևակ Խլղաթյանը, մարզպետի խորհրդական Արտաշես Նիկոյանը, մարզպետարանի գլխավոր քարտուղարի տեղակալ Ալբերտ Աղեկյանը, մարզպետարանի աշխատակազմի վարչությունների պետերը, բաժինների վարիչները, մարզի իրավապահ մարմինների ղեկավարներ և հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ:

Օրակարգում՝

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի 2018 թվականի համայնքային բյուջեների սեփական եկամուտների հավաքագրման արդյունքների մասին:
/Զեկ. Յուրա Մուշեղյան - մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ տնտեսական զարգացման վարչության պետ/

2. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի համայնքներում 2018 թվականին իրականացված աղբահանության վարձավճարների հավաքագրման ցուցանիշների մասին:
/Զեկ. Վանիկ Հարությունյան – մարզպետարանի աշխատակազմի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության պետ/

3. Այլ հարցեր:

Ելույթներ ունեցան՝

Արման Ղազարյանը - Զոլաքար համայնքի ղեկավար
Արմեն Պողոսյանը - Գանձակ համայնքի ղեկավար

Հայտարարությունով հանդես եկավ՝

Վանիկ Հարությունյանը - մարզպետարանի աշխատակազմի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության պետ

Մարզի խորհրդի աշխատանքներն ամփոփեց մարզպետ Գնել Սանոսյանը:

1. **Առաջարկվեց՝**

1) Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի համայնքների ղեկավարներին՝

ա. ամենօրյա աշխատանքներ տանել 2018 թվականի համայնքային բյուջեների սեփական եկամուտների /հողի հարկ, գույքահարկ, տեղական տուրքեր, հողի և գույքի վարձակալությունից եկամուտներ/ և աշխատավարձերի գծով կուտակված պարտքերը մինչև տարեվերջ մարելու ուղղությամբ.

բ. 2019 թվականի համայնքային բյուջեները պլանավորել իրատեսական և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված ժամկետում ներկայացնել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակազմի համապատասխան ստորաբաժանում.

գ. ամենօրյա աշխատանքներ տանել մարզի համայնքներում մարդկանց գիտակցության մեջ աղբահանության դիմաց վճարումներ կատարելու անհրաժեշտությունն արմատավորելու, աղբահանության ծառայությունը պատշաճ իրականացնելու և համայնքների տնտեսվարող սուբյեկտների հետ աղբահանության պայմանագրեր կնքելու ուղղությամբ.

2) Սևանա լճի ափամերձ համայնքների ղեկավարներին՝ համաձայն ՀՀ բնապահպանության նախարարության, ՀՀ ոստիկանության Գեղարքունիքի մարզային վարչության, ՀՀ ընդերքի ու բնապահպանության տեսչական մարմնի և ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի միջև կնքված քառակողմ հուշագրի՝ 2018 թվականի դեկտեմբերի 20-ից մինչև 2019 թվականի հունվարի 20-ը Սևանա լճում ձկնորսության արգելքի ռեժիմի խստացման մասին, աշխատանքներ տանել համայնքների ազգաբնակչության հետ Սևանա լճից որսամիջոցներն ու լողամիջոցները դուրս բերելու և ձկնորսությունը նշված ժամանակահատվածում դադարեցնելու համար:

ՄԱՐԶՊԵՏ՝ ԳՆԵԼ ՍԱՆՈՍՅԱՆ